ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
,,ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա.ՀԱՅՐԻՅԱՆԻ ԱՆՎ.
ԱՐՄԱՇԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ,,ՓԲԸ

РА АРАРАТСКОЕ ГУБЕРНАТОРСТВО
ЗАО ,,АРМАШСКИЙ ЦЕНТР ЗДОРОВЬЯ
ИМ. АКАДЕМИКА А. АЙРИЯНА,,

0624 ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ,
Հեռ. (0234) 6-21-93

0624 РА, Араратская область с.Армаш
Тел. (0234) 6-21-93

N75 03.10.2023 թ.

<<ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ի,

Տնօրեն՝ Արտաշես Մկրտչյանին

ՀՀ, ք. Երևան Երկաթուղային 40փ./2

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ի և << ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ >> ՍՊԸ-ի,/ այսուհետ Ընկերություն/ մջև կնքված ԱԱԿ- ԳՀԱՊՁԲ-23/14 S 09.03.2023թ.N39 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ ,, Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար,,:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝,, Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը,,:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,,Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը,,:

Պայմանագրի 2,1,7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրն խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելու ժամկետում,

բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է , որ ,, Մատակարարումն իրականացվում է 2023թ .III. VI. IX. XI. ամիսներին: մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական /ոչ շուտ քան 3 աշխատանքայի օր առաջ/ պատվերի միջոցով ՝ էլ.փոստով կամ հեռախոսազանգով,,:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ 3-րդ մասի համաձայն՝ ,, Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված,,:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմաագրով սահմանված պարտավորությունները՝ ,, Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով , միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված ,,Գնումների գործընթացի կազմակերպման մասին ,, Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1/ կից վճարման պահանջագրերի հետ մասին, սահմանված կարգով, կներկայացվեն ,, ,,Արդշին բանկ,, ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները /,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, ,,Գնումների մասին,, օրենքի 6-րգ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Հարգանքով ՝

Տնօրեն՝ Լևոն Հայրիյան

Digitally signed by HAYRIYAN LEVON 3411540087
Date: 2023.10.03 12:39:50 GMT+04:00

Կատարող՝ Գ. Հովսեփյան

093-909-214